

ԱՀԿ-ի ուղեցույցները մարդու կղանքի և մեզի անվտանգ օգտագործման համար

ԱՀԿ-ն վերջապես հրատարակել է իր ուղեցույցները հողագործությունում մարդու կղանքի և մեզի անվտանգ օգտագործման վերաբերյալ: Ուղեցույցները կարող են համարվել հիմք և միջոց մարդու կղանքի և մեզի մշակման և կրկին օգտագործման վերաբերյալ հետագա ազգային և միջազգային կանոնակարգման և «Էկոսան» -ը, որպես մարդու արտաթորանքների կառավարման կայուն եղանակի, խթանման համար:

Հաճածայն ԱՀԿ-ի հրատարակության, «Հազարամյակի զարգացման այն նպատակները, որոնք ամենից շատ են առնչվում գյուղատնտեսությունում մարդու կղանքի և մեզի անվտանգ օգտագործմանը, հետևյալներն են.

- Նպատակ 1-ին՝ վերացնել տվյալ և աղքատությունը
 - Նպատակ 7-րդ՝ ապահովել շրջակա միջավայրի կայունությունը:
- «Կղանքի և մեզի օգտագործումը հողագործությունում կարող է օգնել համայնքներին ավելի շատ սնունդ աճեցնել և լավագույնն օգտագործել ջուրը և սնուցիչներով հարուստ ռեսուրսները: Այնուամենայնիվ, դա պետք է արվի անվտանգ ձևով, որպեսզի դրանից առավելագույնս շահի թե մարդու առողջությունը, և թե շրջակա միջավայրը»:

ԱՀԿ-ի հանձնարարականները մարդու կղանքի մշակման համար

Կրտսերականը, որպես պարարտանյութ օգտագործելուց առաջ, պետք է ենթարկվի մշակման: Զնշակված կղանքի տեղափոխման համար օգտագործված սարքերը չի կարելի կիրառել մշակված պրոդուկտի համար:

WECEF-ի «Էկոսան»-ի փորձնական ծրագրերում ուշադրությունը կենտրոնացված է մեծ ու փոքր մասշտարքի էկոլոգիական սանհիտարական համակարգերի, օր.՝ դպրոցների և առանձին տնտեսությունների վրա:

Կղանքի մշակումը կախված չէ համակարգի չափերից: Բոլոր դեպքերում էլ նյութը համարվում է պարոգեն, որը ենթակա է սանհիտարական մշակման՝ նախքան դրա անտանգ օգտագործումը գյուղատնտեսությունում:

Սովորաբար, առանձին տնտեսությունից գոյացած մեզը ավելի քիչ է աղտոտված լինում կղանքով, և դրա պահպանման համար ավելի քիչ ժամանակ է պահանջվում, քան ավելի խոշոր օբյեկտներից գոյացած մեզի դեպքում:

Ըստ ԱՀԿ-ի ուղեցույցների, տնային տնտեսության և մունիցիպալ մակարդակներում նախքան կղանքը օգտագործելը, առաջարկվում է հետևյալը.

- Եթե պահպանման միջավայրի $t = 2-20^{\circ}\text{C}$, ապա պահպանման ժամկետը 1,5-2 տարի է
- Եթե պահպանման միջավայրի $t > 20-35^{\circ}\text{C}$, ապա պահպանման ժամկետը > 1 տարի է
- Ավելի մշակում (մոխիր կամ կիր), եթե $\text{pH} < 9$ և ջերմաստիճանը $> 35^{\circ}\text{C}$, իսկ խոնավությունը $< 25\%$, ապա պարոգեններն ամբողջությամբ կարող են ոչնչանալ կղանքը 6 ամիս պահելուց հետո:

Ավելի ցածր $\text{pH}-ի$ և ավելի թաց կղանքի դեպքում կերկարածզվի պարոգենների ամբողջական վերացումը:

Երկրորդային մշակումը կարելի է կիրառել էկոսան համակարգի սահմաններից դուրս, ավելի խոշոր համակարգերից գոյացած կղանքի հավաքման և մշակման կայանում (մունիցիպալ մակարդակ):

- Ավելի մշակում (մոխիր կամ կիր), եթե $\text{pH} < 9$ և ջերմաստիճանը $> 35^{\circ}\text{C}$, իսկ խոնավությունը $< 25\%$, ապա պարոգեններն ամբողջությամբ կարող են ոչնչանալ կղանքը 6 ամիս պահելուց հետո:
Ավելի ցածր $\text{pH}-ի$ և ավելի թաց կղանքի դեպքում կերկարածզվի պարոգենների ամբողջական վերացումը:
- Կոնպուտացում: Ջերմաստիճանը 50°C մեկ շաբաթվա համար: Սա նվազագույն պահանջն է պարոգենների բացարձակ վերացման համար: Եթե հնարավոր չէ ապահովել անհրաժեշտ ջերմաստիճանը, ապա պետք է երկարածզել պահպանման ժամանակը:
- Այրում, լրիվ այրում (մոխրում ածուխը $< 10\%$):

Ավելի փոքր համակարգերի համար կոմպոստացումն ավելի դժվար է իրականացնել: Անհնար է կապ սահմանել կոմպոստացման և ուղեցույցներով սահմանված մեծությունների միջև: Ցածր ջերմաստիճանի դեպքում (մոտ 20°C) պահպանման ավելի երկար ժամանակ է պահանջվում ասկարիդների լրիվ վերացման համար, չնայած որ Չինաստանի ցուրտ պայմաններում արձանագրվել է ասկարիդների մեծ չափի կրծատումներ:

$\text{pH} - \text{p}$ բարձրացնող նյութի (կիր կամ մոխիր) ավելացումը նպաստում է պարոգենների պահպանիվացմանը:

Աշխատանքի ճիշտ կատարման համար պետք է նկատի ունենալ հետևյալ կետերը՝ տեղում կղանքի պահպանման և հավաքման համար.

- Նախնական մշակումը (զուգարանում) ներառում է կղանքի պահպանումը և ալկալիական մշակումը՝ կրի կամ մոխրի ավելացմաբ:
- Նախընտրելի է, որ pH-ը 9-ից բարձր լինի , որին կարելի է հասնել յուրաքանչյուր արտաթրումից հետո, ավելացնելով 200-500 մլ հիմնային նյութ, օր. Կրի կամ մոխրի:
- Ավելի խոշոր համակարգերի համար (մունիցիպալ մակարդակ) երկրորդային մշակումը, ներաջակա ալկալիական մշակումը, կոնպոստացումը կամ այրումը, կարող է կիրառվել էկոսան համակարգի սահմաններից դուրս:

ԱՀԿ-ի հանձնարարականները մեզի օգտագործման համար

Այլուսակ 1. Մեզի խառնուրդի ^w պահպանման համար առաջարկվող ժամկետը՝ ելնելով պարունակությունից և ավելի խոշոր համակարգերի համար ^p առաջարկվող մշակաբույսերից

Պահպանման ջերմաստիճանը (°C)	Պահպանման ժամկետը (ամիս)	Մեզի խառնուրդում հնարավոր պարունակությունից հետո	Առաջարկվող մշակաբույսերը
4	1 ամիս կամ ավել	Վիրուսներ, պրոտոցոռա	Ուտելի և անասնակերի համար կուլտուրաներ, որոնք ենթակա են մշակման
4	6 ամիս կամ ավել	Վիրուսներ	Ուտելի կուլտուրաներ, որոնք ենթակա են մշակման, անասնակերային մշակաբույսեր ^a
20	1 ամիս կամ ավել	Վիրուսներ	Ուտելի կուլտուրաներ, որոնք ենթակա են մշակման, անասնակերային մշակաբույսեր ^a
20	6 ամիս կամ ավել	Հավանական է՝ ոչ մի	Բոլոր մշակաբույսերը ^b

^w Մեզ կամ մեզ և ջուր: Ջորով բացելիս, ենթադրվում է, որ մեզի խառնուրդի pH-ը ամենաքիչը 8,8 է, իսկ ազոտի խտությունը ամենաքիչը 1 գ/լ:

^p Ավելի մեծ չափի համակարգն այս դեպքում այն համակարգն է, որտեղ մեզի խառնուրդն օգտագործվում է այն մշակաբույսերի պարարտացման համար, որոնք պետք է օգտագործեն ոչ միայն առանձին տնտեսության անդամները , այլև այլ անհատներ:

^a Ոչ արդարանդերը անասնակերի արտադրության համար:

^b Ուտելի մշակաբույսերի համար, որոնք օգտագործվում են հում վիճակում, առաջարկվում է մեզը կիրառել՝ ապահովելով 1- ամսյա ընդմիջում մեզով պարարտացման և բերքահավաքի միջև: Մեզը պետք է ներմուծվի հողի մեջ, եթե ուտելի մասերն աճում են գետնի մակերեսից վեր:

Մեզի օգտագործման ընդհանուր հանձնարարականներ

- Մեզն ուղարկիրեն կարելի է օգտագործել այն հավաքելուց և կարծ ժամանակ պահելուց հետո միայն առանձին տնտեսության մակարդակում:
- Ավելի խոշոր համակարգերի համար մեզը պետք է պահել՝ համաձայն աղ. 1-ում նշված ժամանակահատվածների ու պայմանների:
- Ամենաքիչը 1 ամիս տևողությամբ ընդմիջում պետք է ապահովել պարարտացման և բերքահավաքի միջև:
- Լրացնից և ավելի խիստ հանձնարարականներ կարող են կիրառվել տեղական մակարդակում՝ կղանքով հաճախակի աղտոտման դեպքերում: Պահպանման ժամկետի համար հանձնարարականներն ուղղակիրեն կապված են մշակաբույսերի օգտագործման և ընտրության հետ (աղ. 1):

ՈՒՍԿԸ նվազեցնելուն ուղղված լրացնից միջոցառումները ներառում են հետևյալը.

- Մեզը կիրառելիս պետք է ձեռնարկվեն հնարավոր վարակիչ նյութի հետ աշխատելու նախազգուշական բոլոր միջոցառումները՝ ձեռնոցների օգտագործում, ձեռքերը խնամքով լվանալը:
- Մեզով պարարտացման համար պետք է օգտագործել այնպիսի սարք, որն ապահովի հողի մակերեսին հնարավորին մոտիկ կիրառում՝ խուսափելով աերոզոլի առաջացումից:
- Մեզը պետք է խառնվի հողի հետ: Դա հնարավոր է մեխանիկական ձանապարհով կամ պարարտացմանը հաջորդող ոռոգմամբ:

